

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռիս դիւանը երջանիկ է աւետելու մեր սուրբ Եկեղեցուն և հայ հաւատաւոր ժողովրդին ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, որ Գերագոյն Հոգևոր Խորհուրդը և Մայր Աթոռիս ճարտարապետների յանձնաժողովը, ի նշանաւորումն Հայաստանում քրիստոնէութիւնը պաշտօնական կրօն հռչակուելու հազար եօթը հարիւր ամեակի, 1989 թուականի յուլիսի 14-ի համատեղ նիստում որոշեցին մայրաքաղաք Երևանում կառուցել մի մեծաշուք եկեղեցի հայկական դասական ճարտարապետական ոճի հիման վրայ, որտեղ շուրջ երկու հազար հինգ հարիւր հաւատացեալներ կարողանան միատեղ աղօթել:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
18 Յուլիսի 1989 թ.